ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2023 թվականի N 595 - Ն

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 30-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պետական սեփականություն հանդիսացող պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) համայնքներին, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման պայմանները՝ համաձայն N 3 հավելվածի.

4) այլ կազմակերպություններին պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման պայմանները՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ պետական գույքն անհատույց օգտագործման է տրամադրվում սույն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետով նախատեսված՝ համայնքներին, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին, միջազգային կազմակերպություններին, քաղաքացիներին և այլ կազմակերպություններին (այսուհետ՝ սուբյեկտներ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) կողմից, ապահովելով օգտագործողի հետ տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի կնքումը և տարածքի սպասարկման համար ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը (բացառությամբ սույն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերի):

3. Պետական գույքն անհատույց օգտագործման է տրամադրվում միջազգային կազմակերպություններին (բացառությամբ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների), եթե Հայաստանի Հանրապետությունում հիմնական գործունեություն իրականացնելու համար միջազգային կազմակերպության կողմից հիմնադրված ներկայացուցչությունը կամ մասնաճյուղը գրանցված (հավատարմագրված) է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում, միջազգային կազմակերպության գործունեության ոլորտը համակարգող պետական մարմնի կողմից ներկայացված առաջարկությամբ սահմանված ժամկետով, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համաձայնությամբ:

4. Պետական սեփականություն հանդիսացող շենքերը, շինությունները, ինչպես նաև դրանց մասը կազմող առանձնացված տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված լինելու դեպքում՝

1) եթե առանձին շենք, շինություններ են կամ դրանցից առանձնացված տարածք, ապա սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 3-րդ կետով նշված սուբյեկտների հետ կոմիտեն ապահովում է օգտագործողի հետ տարածքի սպասարկման համար ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը.

2) եթե պետական սեփականություն հանդիսացող տարածքը սույն կարգի համաձայն տրամադրվել է և այն շենք, շինության առանձնացված տարածք չէ և կոմունալ ծառայությունների իրականացումը լրացուցիչ ծախսերի կատարման պատճառով նպատակահարմար չէ առանձնացնել, ապա այս դեպքում սուբյեկտների համաձայնությամբ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվում է ոչ թե կոմիտեի, այլ շենք, շինության հիմնական մասի օգտագործողի հետ (այսուհետ՝ օգտագործող), որը միաժամանակ իրականացնում է ամբողջ տարածքի սպասարկումը: Ընդ որում, օգտագործողի հետ կնքվող ծառայությունների վճարի հաշվարկման համար, որպես ելակետ կարող է ընդունվել ընդհանուր շենքի համար նախորդ տարվա կոմունալ ծառայությունների՝ յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրին համապատասխանող կոմունալ ծառայությունների համար օգտագործողի կողմից կատարված վճարների միջին մեծությունը (հաշվի առնելով սակագների փոփոխությունը, եթե այն առկա է):

5. Պետական ոչ առևտրային կազմակերպություններին գույքն անհատույց օգտագործման է տրամադրվում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի, իսկ ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին՝ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի դրույթներին համապատասխան:

6. Պետական սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքում գույքի անհատույց օգտագործման պայմանների նկատմամբ հսկողությունն իրականացնում է կոմիտեն՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի անհատույց օգտագործման կնքված պայմանագրի դրույթների համաձայն:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 304-Ն որոշումը:

8. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված անհատույց օգտագործման այն պայմանագրերը, որոնց ժամկետները լրացել են սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ և 685-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համաձայն՝ ճանաչված են վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով, ապա որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում դիմում ներկայացնելու դեպքում՝ կարող են վերակնքվել ևս մեկ անգամ՝ 2 տարի ժամկետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան, իսկ չներկայացնելու դեպքում՝ լուծվում են:

9. Սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և ընթացքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գույքի անհատույց օգտագործման տրամադրման իրավահարաբերությունների վրա, դրանք իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ սահմանված կարգավորումների:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ